

Տարեկանը ղինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կօպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն կամրադրատան մէջ.

Тифлис. Редакція «Мшакъ»

SCUL

Խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարու թիւների համար զնարում են
խրատանշիւր քառին 2 կօպէկ:

„U T U U“

լրագրին կարելի է գրվել

Կ Է Ս Տ Ա Ր Ո Վ

Ա. յսինքն յուրիսի 1-ից ներկայ 1881
թվի, մինչև յունվարի 1-ը 1882 թվի:

Բաժանորդություն գինը 6 լուր է:
Գրվելու համար պէտք է ուղղակի գիմել
խմբագրությունը հետևեալ հասցեով. Труды
и сщ, редакция „Мшак“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցներին: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ
ԹԻՒՆ, Միացեալ ընկերութիւն: Փիւրբա: Բոլ
շարիա: Անգլիա: Ամբիկա: Ֆրանսիա: Նամա
Պարսկաստանից: Նամակ Թւրքիայից: Արտաթ
լուրի: — ՀնԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ:

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՆԵՐԻՒՆ

Մեր գաւառական թղթակիցներէց շատ-
լը անդադար գնդաւորու՞մ են, որ նրանց
ուղարկած թղթակցութիւնների մեծ մա-
սը չեն տալու՞մ «Մշակի» մէջ:

Կան ի հարկէ և այնպիսի թղթակցութեաններ, որոնք չեն տալովում մեզանից անկախ պատճառներով, բայց թղթակցութեաններ լինելու մեծ մասը այն աստիճան միակողմանի են, որ մենք ինքնիրա ստիպված ենք չը գետեղել նրանց մեր լրագրի էջերում:

գաւառացի հայը երբ գրում է մի նա-
մակ, մի թղթակցութիւն, ժողովանակ լոկ-
փաստեր, իրողութիւններ հայորդեայու, ըսկ-
սում է երկար ու բարակ դատողութիւններ
անել մի որ և է չափից զուրս մանաւոր
երեւոյթի վրա, որ կարող է հետաքրքրի-
միմայն իր քաղաքի, կամ գիւղի նեղ շըր-
ջանը։ Այդ տեսակ նամակներ ստացվում են
Անդրրովկասի և Էովկասի ամեն ծայրերից
այնպիսի քանակութեամբ, որ հնար չը կա
գետեղել նրանց մինչև անգամ մի ամենօրեայ
թերթի մէջ։ Հարկաւոր կը լինէին բազմա-
թիւ գաւառական թերթեր այդ բոլո՛ւ
թղթակցութիւնները տպելու համար։

Պատահում է որ գաւառական թղթակցութիւնը ջանում է դատողութիւններ անել ընդհանուր, ազգային հարցերի մասին որ իսկապէս նոյն իսկ խմբագրութեան խմբագրի գործն է՝ հաւաքված իրողութիւններից առաջնորդող յօդուածներ գրել:

Բայց շատ քիչ է պատահում որ գաւառական հայ թղթակիցը հազարդէր փաստեր, իրողութիւններ իր նամակներէ մէջ տար խմբագրութեանը առատ և ճիշդ նիւթ բնդհանուր առաջնորդող յօդուածներէ համար:

Այնպիսի նրութաւոր նամակներ, ինչպէս
օրինակ, Բագուից զբաժնաւոր արտադրող
բանօրներին զրուծեալ վրա, կամ Երեւանի
զբաժնի թղթակցութիւնը երեւանեան նա-
հանգի կալուածական խնդրի վրա,—պատ-
կանութեան են ոչ թէ մեր մշտական, այլ պատ-
աստական թղթակցներին: Եւ այդ պատ-
աստական նամակները առատ նրութե-

տալիս առաջնորդող յօդուածներին համար։
Հայը առհասարակ դիտող չէ՝ նա չէ
սեմնում, չէ նկատում ինչ որ կատարվում
է իր շուրս կողմ։ Հայը աւելի սիրում է
Փրազա, ընդհանուր դատողութիւն, փի-
լիսօփայութիւն, նրան դժուար է դիտել,
ուսումնասիրել, պատկերացնել իր շուրս կողմ
եղած հասարակական երեւոյթները։ Հասա-
րակական, ազգագրական, անտեսական երե-
ւոյթները չեն հետաքրքրում հային։ Մեր
թղթակիցները մեծ մասամբ զրուս են զը-
պրոցների մասին, բայց այդ խնդրին մէջ էլ
նրանք քննում են վարժագետի, տեսչի,
հոգաբարձուների լաւութիւնը կամ վատու-
թիւնը, պատմում են նրանց փոխադարձ
կռիւները, յայտնում են որ զպրոցի փողիւր
ապահով են, կամ ապահով չեն դանձարա-
նի արկղի մէջ, նկարագրում են ինչպէս է
անցել այս կամ այն դպրոցի տարեկան
հարցաքննութիւնը։ Բայց թէ ի՞նչ յարա-
բերութիւն, ինչ կապ ունի դպրոցը հասա-
րակութեան հետ, ինչ մանկավարժական
ուղղութեան է հետեւում, ի՞նչ կրթիչ ներ-
գործութիւն ունի շըջապատող փողովուր-
դաւ, արդեօք դպրոցի մէջ մանուկներին
ստացված ուսումը յարմար է, համապա-
տասխան է նրանց ամեօրեայ, կենսակա-
պէսքերին, երբ ուսումնարանի նստաբեկ-
ները թողած, նրանք կեանքի մէջ են մըտ-
նում և այլն,—այդ բոլորը չէ հետաքր-
քրում մեր հայ թղթակիցներին։

Հայը շատ սիրում է պոփերիկա, գրական
բանակալու։ Եւ այդ բանակալուի մէջ շա
հազիւ է պատահում տեսնել Հայրը պար
զող իրողութիւններ և դատողութիւնն
այլ մեծ մասամբ բանակալու առարկան լ
նում է անձնական Հաշիւը, անձնաւորո
թիւնն նկարագրը, կոշտ ու կոպիտ յա
ձակմունքները անձի վրա։

Իսկ ամէն ազգի մէջ գլխաւոր համարվ
լինդիրը, տն տ ե տ ա կ ա ն խնդիրը, մինչ
այժմ, բացի պատահական նամակներէց, մ
գտառական թղթակցութիւնների առա
կայ եղած չէ երբէք: Գուցէ դիտելու հ
մար տնտեսական երևոյթները հարկաւ
էր տնտեսագիտական կրթութիւն—իսկ դ
ծնարկտ է, կատարելապէս պակաս է մ
ժողովրդին:

Վերջացնելով մեր խոսքը դարձեալ լին
բումենք մեր գաւառական թղթակիցն
լրից աւելի աշխատել հաղորդել միմա
լուրեր, փաստեր, իրողութիւններ: Որք
առատ կը լինեն այդ տեսակ հաղորդ
թիւնները, առանց երկար ու բարակ դ
աղորութիւնների,—այնքան աւելի շնորհ
կա, կը յիշենք մեր թղթակիցներին:

Ամեն անգամ որ Մշակի՜կ մէջ մի նամակ էր հրեւում, որ համապատասխանում եւրօպական մտքով լրագրական թղթում ցույցեան գաղափարին, մենք դիմում մատնացոյց էինք անում այդ տեսակ թղթականութեան վրա: Բայց դարձեալ հետեւողներ քիչ են լինում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

երեկ Միացեալ Ընկերութեանց Կեդրոնական ժողովոյ ժԸ նիստը տեղի ունեցաւ Ղայաթիոյ Կեդրոնական վարժարանին մէջ, եւ ներկայութեան 30-ի չափ երեսփոխանաց։ Ատեանը բացուեցաւ ժամ 7-ին, առժամեայ նախադահլութեամբ Տըքթ. փէշտիալճեանէ Հէջէնտիի։ Ատենագրութեան ընթերցումէն ու վաւերացումէն յետոյ, վարչութեան առեւտնապետ Միլոս Զերպօ Հֆ. խօսք առնելով՝ Կեդրոնական ժողովոյ ներկայացուց նորակազմ Տնօրէն ժողովն, եւ այս առթիւ առեւտնաբանութիւն մ'ըբաւ, զոր կը հրատարակեմք ի ստորեւ։ Կիւանական թղթակցութեան ընթերցումէն յետոյ, ժողովն ըզբաղեցաւ վարչութեան մի ընդարձակ տեղեկագրովն։ Վարչութիւնը կը յայտարարէր թէ իւր բոլոր գործերը, հաշիւներն եւ թղթակցութիւնները բաց են եւ բաց պիտի մնան իւրաքանչիւր երեսփոխանի համար եւ թէ ինք չը պիտի մասնակցի այն ամէն քուէարկութեան որ տեղի ունենայ իւր գործառնութեանց նկատմամբ, որպէս զի իւր 7 քուէից կշռովը չը խափանէ ժողովին կամաց ազատ արտայայտութիւնը, քանի որ Միացեալ Ընկերութեանց Կեդրոնական ժողովն մէջ 13 քուէ բաւական են որոշում տալու համար Տեղեկագիրն այնուհետեւ Կեդրոնական ժողովոյ վաւերացմանը կենթարկէր վարչութեան որոշումները 14 կարեւոր խնդրոց նկատմամբ։ Սոցա վրայ վիճարանութիւն բացուելով, վարչութեան անդամոց տուած բացատրութեանց վրայ՝ 9 խնդիրը ընդունուեցան միաձայն հաւանութեամբ, եւ օրը տարաժամած լինելուն համար միւս 5 խնդրոց քննութիւնն յետաձգուեցաւ յաջորդ նստին, որ պիտի գումարի երկու շաբաթէն։ Ատեանը փակուեցաւ ժամ 11¹/₂-ին։

Աւանիկ Պ. Մինազ Զեքազի տաճնաբան
հուժեան պատճէնը.

Պարոններ, Պատիւ ունեւիմ ներկայացունեմ
ձեզ վեց նորընտր պաշտօնակիցներս, որովք
կազմուեցաւ ձեր վարչական մարմին: Որպէս
կը տեսնէք, պէտք չունեցայ տունուկ ոչ-
երեսփոխան աջակիցներ, զի Միացեալ Ըն-
կերութեանց կեդր. Ժողովն ունի իւր մէջ
ամեն հարկաւոր տարր ամեն ճիւղի հա-
մար: Պ. Զովհանէս Արշակունի ստանձնեց
ատենադպրութիւնն, Պ. Աթթէնս Պէրպէ-
րեան ուսումնապետութիւնն, Պ. Կէորզ Թո-
փալեան դանձապետութիւնն, Պ. Միսսա-
Մանուկեան հաստէթապետութիւնն, Պ.
Զովհանէս Կիւլպէնկեան ծախապետու-
թիւնն և Պ. Զովհանէս Ընորհքեան հա-
շտակալութիւնն: Վարչութիւնն սկսած
գործել, որպէս իրաւ յայտնէ այժմ իւր ա-
ռաջին տեղեկագիրը. այլ նա պէտք ուն-
է ձեր համակիր աջակցութեան, զի ձեացա-
նէ 7 անհատներէ, մինչ դուք կը բաղկա-
նաք 65 անձերէ: Եւ ներէ՞ք մեզ յարել թիւ
որպէս զի չը կուրի այդ գործակցութիւն
հարկի է որ հաշտութեան ծխածանն բար-
բանայ կեդր. Ժողովին վրայ, որպէս ծագ

ցառ Տնօրէն ժողովին մէջ: Գաղափարի տարբերութիւնք բնական են ամեն ակումբի համար ոյր նշանաբանն չէ կրօնական հնազանդութիւն: Կուսակցութիւնք կրնան արդար լինիլ հաւատարմապէս, զի ձգնարութիւնն կրնայ նկատուիլ զանազան տեսակեաներէ, որպէս Արարատ որ ունի տարբեր երեւոյթ հիւսիսէն և տարբեր հարաւէն: Սակայն երբ միտն կը նրբանայ մինչըրժանդրութիւն, պէտք է որ սիրան վիճակ մնայ միշտ: Գուք ունիք այս մեծանշանութիւն, զի կը ներկայացունէք երիտասարդութիւնն, հասակ ուր հոգին բաց է ամեն գեղեցիկ զգացման առջև: Մեք, որ միացեալ եմք ոչ լոկ անունով, կրկնապատկեմ մեր ճիգեր որպէս զի մեր սուրբ ձեռնարկերականգիւր բարոյապէս և նիւթապէս գիտեմ թէ ժամանակն է աննպաստ և թական ամենուրեք թերահաւատներ մեր զործի նկատմամբ: այլ հարկ է որ դա աւելի վառ է մեր անձնութիւն: Նոցա, որք կը հոչակեն թէ մեր կրթական նպատակ անօգուտ և մինչև իսկ ֆէաստակար է ազգիկն կը պատասխանեմք անխռով: »Երթութիւն ոչ նուազ անհրաժեշտ է զործաւորին համար, մշակին համար, արհեստաւորին համար, վաճառականին համար: « Ի՞նչ է մեկ նպատակ.—Նկատաւելով տեղական պէտքերն, պատրաստել մի սերունդ որ լինի առողջ, աւաքինի և հմուտ: Նա որ ունի կորով, բարոյական և գիտութիւն, կրնայ հասնիլ զվերակեցութեան: Ահա մի յաւտագիր ում կը համակրի մեր ազգ, որպէս մեք կը համակրեմք Արուեստասիրաց Ընկերութեան: Նոյն նպատակին համար մեք հետ կաշխատակցին աստ Թիգանի և Ասիական Ընկերութեանց մեր ընտիր եղբայրն և մինչև իսկ Ազգանուէր, Կրթասէր Պարզասէր Ընկերութեանց մեր ազնիւ բարեր: Այսքան անձնութիւնք, որ փառքով կը ծածկին Կոստանդնուպոլսի Հայերն և Հայուհիներն, չը պիտի մնան ապուղջ: Միացեալ Ընկերութիւնք, իր գործելն այս շարժման, ունին մեծագոյն պատասխանատուութիւնն: Ուրեմն բազմապատկեմք մեր զոհողութիւնք, և մեր խի պիտի լինի գուարթ: Ազգասիրութիւնն, մի շնորհ կը նկատուէր ցարդ, մի պարէն է այսուհետև: Ունենամք այս համոզում և մեր ակումբ, որ նոր բոլորեց առաջնապահն, պիտի ոգծունէ երկար տարիներ:

(Gamma)

ԹԻԻՐՔԻԱ

Ալբանցիները Բ. Գրան ամենաանհաշտ թշնամիներ են դարձել այն ժամանակից, ինչ թիւրքաց կառավարութիւնը աքսորից նրանց գերի ընկած առաջնորդներին: Մի-
և նոյն ժամանակ ալբանցիները չեն կամե-
նում հպատակիլ Զունաստանին և այդ
պատճառով այժմ նրանց զլխաւոր նպա-
տաւն է ընդդիմադրել Զունաստանին: Ինչ-
իւր վերաբերի Զունաստանին զիջած երկիր-
ների յոյն բնակիչներին, նրանք անտարբե-
րութեամբ են վերաբերում իրանց վիճակի

փոփոխութեանը: Նրանցից շատերը մինչև անգամ յայտնում են, որ իրանք գերադասում են մնալ Թիւրքիայի հպատակ, որովհետև Յունաստանը շատ տուրքեր կը պահանջի և գինուորներ կը հաւաքի:

Եւրոպայի մէջ յայտնված համակրութիւնը Միտհադ-փաշայի վիճակին վատ տպաւորութիւն գործեց և Պոլսի մէջ Պալատականները, վախենալով Եւրոպայի միջամտութենից յօգուտ Միտհադ-փաշայի, շտապեցնում են սուլթանին, որ նա հաստատի դատաւճիւրը: Եւրոպական շրջաններէ մէջ երկուց են կրում, որ սուլթանը կը հետեւի այդ խորհուրդներին և դատաւճիւրը գաղտնի կը կատարվի: Մահման պատժի մասին կը յայտնեն այն ժամանակ, երբ նա կատարված կը լինի:

Այլ աղբիւրներից հաղորդում են, որ Միտհադ-փաշա հրաժարվում է արքայազնից: Նա աւելի լաւ է համարում մեռնել ամբողջ աշխարհի առաջ և անիրաւութեան դոհ համարվել, քան թէ ապրել մի հեռու երկրի մէջ, որտեղ նա անյայտ կը մնայ և նրա մահը աննկատելի կանցնի: Պալատից լուրեր են տարածում, իբր թէ դատաւարութեանը մի դաւադրութիւն էին կազմել սուլթանի ամբողջ ազգը ոչնչացնելու նպատակով:

Մահմեդ-փաշայի և Նուրի-փաշայի փաշաների կին սուլթանի քոյրերը մի նամակով յայտնել են իրանց եղբորը, որ նրանք իրանց երեսներով կը մեռնեն այն իսկ օրը, երբ նրանց ամուսնիները կենթարկվեն մահուան պատժի:

ԲՈՒԳԱՐԻՍ

Սօֆիայից լրագիրներին հաղորդում են, որ պատերազմական միջոցները Եւրոպայի անբաւական են ոչ թէ միայն ազատամիտները, այլ և կառավարութեան կուսակցները: Միջոցները գործադրած արտաքին կարգի միջոցներից շատերը ընդունվեցան միայն գեներալ Եւրոպայի պահանջի համեմատ, բայց որովհետև իշխանին շրջապատող անձինքներից շատերը անբաւական էին այդ միջոցներից, ուրեմն հազիւ թէ Եւրոպայի կարգանայ այսուհետև վարել պատերազմական միջոցները պաշտօնը, եթէ մինչև անգամ բոլորական ազգային մեծ ժողովը ընդունէ իշխան Ալէքսանդրի պահանջները:

Բոլորացիները այն կարծիքի են, որ ոչինչ միջոցներ չեն հասցնի իշխանին իր նպատակին, եթէ Ռուսաստանը չը յայտնէր, որ նա անհրաժեշտ է համարում իշխան Ալէքսանդրի մնալը Բոլորացիի մէջ: Ռուսաց դիպլոմատիական գործակատար Խիտրով մեծ ծառայութիւն արաւ իշխանին, իսկ «Правит. Вѣстн.» լրագրի մէջ մայիսի վերջին տպված կառավարչական հաղորդութիւնը օգնեց իշխանին: Որովհետև այդ հաղորդութիւնը անյապաղ թարգմանվեցաւ բոլորական լեզուով և տպվեցաւ պաշտօնական լրագրի մէջ, շատ ընտրողներ զրանից զբոլեցան ձայն տալ յօգուտ իշխան Ալէքսանդրի առաջարկութիւններին:

Թէ որքան մեծ է Ռուսաց ազդեցութիւնը Բոլորացիի մէջ, կարելի է դատել հետեւեալ հանգամանքից. այն քաղաքների մէջ, որոնց այցելեց իշխան Ալէքսանդր, թէպէտ նրան պատգամաւորութիւններ էին ներկայանում իրանց համակրութիւնը յայտնելու համար, բայց նրանք դիմում էին Ռուսաց գործակատարին և տեղեկութիւն էին խնդրում Ռուսաստանի իսկական դիտաւորութիւնների և ցանկութիւնների մասին: Իշ-

խան Ալէքսանդր վճռեց չայցելել այն գաւառները, որոնք թշնամաբար էին վերաբերվում նրա պահանջներին: Այսպէս թէ այնպէս Բոլորացիի այժմեան դրութիւնը չափազանց կրիտիկական է:

Ընթերցողներին յայտնի է «Միջազգային ընկերութեան» հաղորդած հեռագրից, որ բոլորական ազգային ժողովը ձայների նշանաւոր մեծամասնութեամբ ընդունեց իշխան Ալէքսանդրի պահանջները:

ԱՆԳԼԻԱ

Բրէքլո յայտնեց համայնքների ժողովի սպիկերին, որ նա կը փորձի մոտել համայնքների ժողովը երբեք տալու համար, որովհետև, նրա կարծիքով, ոչ ոք իրաւունք չունի արգելել ժողովի անգամներին, որ նրանք կատարեն իրանց պարտաւնական պարտականութիւնները: Այսու ամենայնիւ Բրէքլո վճռել է այդ գործը յետաձգել մինչև կալուածական օրինագծի քննութեան վերջնալը:

Պարնել իրանդական պատգամաւորների կողմից հեռագրով յայտնեց Միտհադ Նահանգների գլխաւոր քարտուղարին իրանդական կուսակցութեան անբաւականութիւնը Հարֆիլդի վրա հրացան արձակելու առիթով: Իրանդական գործիչները վճռողականապէս մերժում են այն լուրը, իբր թէ Գիտո պատկանում է Ֆենիկների կուսակցութեանը:

Իրանդական կալուածական օրինագծի քննութիւնը համայնքների ժողովի մէջ աւելորդութեամբ է կատարվում: Մինչև այժմ ընդունված յօդուածներից ամենանշանաւորը եօթներորդ յօդուածն է, որովհետև նա ապահովում է երկրագործին նրա կալուածքը և նրա աշխատանքի պտուղները: Այդ յօդուածը ընդունվեցաւ ձայների ահազանքի մեծամասնութեամբ: Կարծում են, որ այսուհետև վիճարկութիւնները աւելի աւելորդութեամբ կանցնեն:

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինգտոնի դատաստանական իշխանութիւնը նիւթեր է պատրաստում Գիտոնի դատելու համար: Մեղադրանքը ոչինչով չի գանազանվի սովորական յանցաւորների մեղադրանքից: Եթէ հանրապետութեան նախագահը կը մեռնի, Գիտոն կը դատեն իբրեւ մարդասպանի, իսկ եթէ նախագահը կենդանի կը մնայ, յանցաւորին այնպէս կը դատեն, ինչպէս մի մարդու, որ սպանութեան փորձ է արել: Այս վերջին դէպքում ամենամեծ պատիժը բանտի մէջ կալանաւորութիւնն է: Շատերը առաջարկում են փոխել այդ օրէնքը և մահուան պատժի ենթարկել այն յանցաւորին, որ կը փորձի սպանել հանրապետութեան նախագահին: Վաշինգտոնից ստացված լուրերը հանգստացրել են ամերիկացիներին, որոնք յոյս ունեն, թէ Հարֆիլդ կառողջանայ: Պետական պրօկուրորը յայտնեց, որ դատաստանը չէ կարող կայանալ մինչև չը ռոլլի յանցանքի հետեւնը: Գիտո հաղորդեց նրան իր յանցանքի մանրամասնութիւնները իր մտադրութեան ծագելու: Բոլորացի մինչև նրա կատարելը: Պրօկուրորը այդ ցուցմունքը, որ իր ժամանակին կը հրաւիրուի, կատարելապէս ճշմարիտ է համարում: Յանցանքը ստանաւորութեամբ էր մտածված և յանցաւորը շատ լաւ հասկանում էր նրա հետեւնը: Շատ տեղերից

պահանջում են, որ յանցաւորը խստութեամբ պատժվի:

ՖՐԱՆՍԻԱ

Անկարգութիւնները Տունիսի մէջ հետզհետէ սաստկանում են: «Temps» լրագրի թղթակիցը այն կարծիքի է յայտնում, որ Ֆրանսիացիք պէտք է զրաւեն մի քանի նշանաւոր կէտեր մեծ զօրաբաժնիներով, որպէս զի յանպատաստից յարձակման չենթարկվին: Ֆրանսիացիների ամենափոքր անաջողութիւնը ամենավատ հետեւններ կարող է ունենալ: Սֆախ ուղարկած Տունիսի գինուորներին չէ կարելի հաւատալ, որովհետև նրանցից շատերը փախուցում են և անցնում են թշնամու կողմը: Գերմանական և սպանիական հիւպատոսները հեռանում են Տունիսից և երեւի նրանք չուտ չեն վերադառնայ: Սայդիի մէջ եղած կոտորածի զոհերի համար հաւաքված է մօտ 50,000 Ֆրանկ: Գրիփի նուիրել է 5000 Ֆրանկ, իսկ լրագիրների խմբագրութիւնները 250 Ֆրանկ իւրաքանչիւրը:

Սպանիական կառավարութիւնը չափազանց մեծ վարձատրութիւն է պահանջում Ալժիրայի մէջ սպանված սպանիացիների ընտանիքների համար: Ֆրանսիական կառավարութիւնը յիշեցրեց, որ կարիստների պատերազմի ժամանակ սպանիական կառավարութիւնը հրաժարվեցաւ վարձատրել այն Ֆրանսիացիներին, որոնք մնացել էին ներքին պատերազմից:

Սուդայից հեռագրում են, որ ապստամբների առաջնորդ Լիբեն Սալիւա միացաւ Սֆախի ապստամբների հետ: Փաղաքը բազմաթիւ արաբներ են գալիս, միանում են ապստամբների հետ և սպասում են Ֆրանսիական զօրքերի յարձակմանը:

Հիւսիսային Աֆրիկայի մէջ կատարվող անցքերը անհանգստացնում են Ֆրանսիացիներին, իսկ Ֆրանսիական լրագիրների մէջ տպված յօդուածներից երեւում է, որ մամուլը այժմ հարցին աւելի ճիշդ տեսակետից է նայում: Ֆրանսիական լրագրութիւնը չէ կամենում խոստովանել, որ Տունիսի դէմ սկսած արշաւանքը մեծ անգութ շութիւն էր, բայց մի և նոյն ժամանակ մատնացոյց է լինում արտաքին գործերի միջոցաւ սկսված պատերազմի վրա:

Մամուլը մեղադրում է Բարտեմի Սենտ Ելիերին, որ նա յունական դժուարութիւնների ժամանակ Թիւրքիայի կողմը բռնեց, իսկ այդ վերջինը շնորհակալութեան փոխարէն ապստամբեցնում է Ֆրանսիացիներին դէմ Ալժիրայի, Տունիսի, Տրիպոլիի և Մարոկկոյի մահմեդականներին: Արտաքին միջոցաւ շնորհիւ Իտալիան զբաղված է Ֆրանսիայի դէմ, որ ամբողջ Եւրոպայի մէջ այժմ առանձնացած է և թշնամացած լատինական պետութիւնների հետ: Այդ մեղադրանքները մասամբ իրաւացի են, բայց օտարօտի է այն իրողութիւնը, որ մամուլը խորհուրդ է տալիս Ֆրանսիական կառավարութեանը բարեկամանալ Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի հետ: Լրագիրները յայտնած այսպիսի մտքերից երեւում է, որ գործերի դրութիւնը Ալժիրայի մէջ չափազանց վատ է:

Այս բոլորից երեւում է, որ Ֆրանսիական արտաքին քաղաքականութիւնը պէտք է արմատականապէս փոխել, մինչդեռ Բարտեմի Սենտ Ելիեր մնում է իր պաշտօնի մէջ, իսկ պատգամաւորների ժողովը չէ էլ մտածում նրան փոխել: Գրա պատճառն այն է, որ հանրապետութեան նախագահը չէ կամենում բաժանվել այն միջոցաւ:

Թեւից, որ սենատի օգնութեամբ կարողացաւ յաղթել Գամբետային: Մինչև պատգամաւորների ապագայ ընտրութիւնները չը վերջանան, այժմեան միջոցաւ չեն թողնի իրանց պաշտօնները, եթէ մինչև անգամ այդ մարդիկներից կազմված կառավարութիւնը մեծ փոփոխութիւն չստանի:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԻԱՍՏԱՆԻՑ

Թաւրէզ, 30 յունիսի

Եթէ կայ աշխարհիս երեսին մի ազգ, որ դարերի հոսանքը չէ դուրս բերել անշարժութիւնից, մի ազգ, որ աւելի լաւ է համարում մնալ կատարեալ անկրթութեան մէջ, որ չունի ոչ մի ձգտում դէպի առաջդիմութիւն, — դա պարսից ազգն է: Այդ անշարժութիւնը չէ նշմարում միայն պարսիկների մէջ, այլ և Պարսկաստանում ապրող հայերի մէջ: Պարսկաստանի գլխաւոր հայաբնակ քաղաքը, որ փոքր ի շատեւրաւորված է, այդ Թաւրիզն է, որի մէջ ապրող գլխաւորապէս գաղթական հայերը, ըստ մեծի մասին պարագայում են վաճառականութեամբ, ունեն մի ուսումնարան, որ առաջինը պիտի համարել պարսկահայերի մէջ, նոյնպէս մի մասնաւոր դպրոց Լիւթաւայում, և մի ընթերցարան:

Ուսումնարանի դրութեան նայելով, մեծ դանդաղութիւն կարելի է գտնել ներկայ և անցեալ տարիների մէջ: Մի քանի տարի առաջ ուսումնարանը ունէր մի խումբ աշակերտ և գիտնական ուսուցիչներ, ունէր բազմաթիւ հոգաբարձուք, որոնց շնորհիւ դպրոցը արագաբայելի միջոց էր դէպի առաջ: Իւրաքանչիւր տարվայ քննութեանը ներկայ էին լինում Թաւրիզի պարսից նշանաւոր ներկայացուցիչները, օտարազգի հիւպատոսները: Իսկ այս տարի շնորհիւ մի որ և ից Գասպարեանին, որը շուտով հեռացաւ այստեղից, ուսումնարանը կարելի էր համարել առանց հոգաբարձութեան, ունէր 2 ուսուցիչ, իսկ հարցաքննութիւն ամենին չէ լինելու: Հայի յետի խնդր գովելի է ասում է առաջ: Մեր մէջ մի գործողի, մի անձնակերպ անհատի աշխատութիւնը այն ժամանակ միայն գիտեն դաստիարակել, երբ նրան կը հալածեն, երբ նրան վերջապէս կը ստիպեն ձեռք վերցնել իր սկսածից, և ամեն տեսակ չարութիւն գործելուց յետոյ, նորից կը զգան որ մի մեծ բան կորցրել են... Տեղացիք հասկանալով այժմ իրանց սխալը, որ զոհ են իրանց կամայականութեանը ուսումնարանի առաջդիմութիւնը, զրկվել անխոշ անխոշող մի քանի անհատներից, այժմ սկսում են մտածել առաջիկայ տարուան համար կրկին նրանց հրաւիրել, որոնց հալածել էին: Այս արտաւայ ընտրված հոգաբարձութիւնը կը յուսանք, որ բարեխղճաբար կը կատարէ իր պաշտօնը և չի հետեւի վերջին տարիների անկարգութիւններին: Պէտք է հրաւիրել նման ուսուցիչներին, որոնք յարմար գտնվելով իրենց ստանձնած պաշտօնին, բարեկարգին այդ հիմնարկութիւնը, որտեղ հարկաւոր մանուկներ, առանց մի հիմնաւոր ուսումնարանի, անց են կացնում իրենց ժամանակը: Պէտք է ի նկատի ունենալ և այն, որ այդ դպրոցը միակ հիմնարկութիւնն է, որ եթէ ոչ ամբողջ պարսկահայերին, գոնէ Արագածականի հայ բնակիչներին պէտք է լայն և կրթութիւն մատակարարէ:

Ընթերցարանի վիճակը նոյնպէս լաւ չէ: Առաջ ստացվում էին բաւական ամառգիրներ, լրագիրներ, նոյնպէս և օտար լեզուներով, իսկ այս տարի միայն 5 լրագիր է ստանում, այն էլ իւրաքանչիւրից մի մի համար: Բաց է լինում շաբաթ երկու թէ երեք օր, այն էլ մի քանի ժամ: Պարոն Համբարձում Առաքելեանցը ամսոյս 7-ին երկուշաբթի իր տան մէջ, յօգուտ օրիորդական դպրոցի, կարդաց «Պարսկահայոց վերաբերութեամբ» մի դատախօսութիւն: Բայց տեղացիներին այնքան չէ հետաքրքրում իրանց վիճակի մասին, իրանց աղաակիցների մասին տեղեկութիւն ստանալ: Այնպէս որ, չը նայելով դատախօսութեան նիւթը շատ հետաքրքրական էր, դարձեալ ներկայ եղողների թիւը խիստ սակաւ էր, թէև դատախօսը լաւ ընդունելութիւն դատու: Պարսկաստանի մէջ գիւղերի մեծ մասը գանազան խաների և բեկերի իշխանութեան տակ է լինում: Արաքսից 2 օրվան ճանապարհ հեռի

պարսից սահմանում կան մի քանի հայաբնակ և թուրքաբնակ գիւղեր, որ մի ժամանակ գտնու-
վում էին Անիի խան անունով մի նշանաւոր
աւազակի իշխանութեան տակ: Գիւղացիները այդ
հրէշի ձեռքից բաւական ժամանակ տանջվելով,
վերջապէս նրանցից մի քանիսը դանդաղորդ
գրմում են կառավարութեան, որը այդ խանին կաշանա-
ւորել է տալիս: Խանը վերջապէս մի կերպ ազատ-
վելով, վերադառնում է դէպի այն գիւղերը, որ-
տեղից նրա դէմ դանդաղութիւն էին: Վրէժխնդիր
լինելու համար, սկսում է գաղանային անդժու-
թեամբ չարչարել գիւղացիներին և յափշտակում
է նրանց ունեցածը: Կս ակնառտես եղաջ մի
հայ գիւղում կարապետ անունով տանուտէրից
սարսափելի դանաճարութիւնից յետոյ առել էր
350 թուման փող, և բաւականաչափ նրա ունե-
ցած եղներէց և դոմէնից, բացի դրանից, խա-
նը իրեն համար հնձել էր տալիս նորա արտը:
Բայց ինչու չէն դանդաղութիւն, կը հարցնի ըն-
թերցողը: Նրը դանդաղութիւն են, կառավարու-
թիւնը բռնում է տանում խանին, չարչարում,
ունեցածը խլում և սոված գալի: Նման բաց թո-
ղում: Այնպէստես կողոպտված խանը սկսում է
իր տուած կաշառքները, տուգանքները դարձեալ
ողորմելի գիւղացիներէց յետ տանալ: Այդ գիւ-
ղերից մօտ 60 ընտանիք պատրաստվում էին
Արաքսի միւս ափը անցնելու ուստաց հողի վրա:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՒՄԵՐՑ

Կ. Պօլսի, 2 յուլիսի 81

Օրուայ լուրը այստեղ մարքից ՕՖ Բաթի
գալն է, յայտնի է, որ սա հայոց խնդրի գլխա-
ւոր փաստաբաններից մինն է անգլիական պար-
լամենտի մէջ և իր Կ. Պօլսի գալը անշուշտ յա-
րակցութիւն ունի իր պաշտպանած դատի հետ:
Մինչդեռ ազգային ժողովի շնորհիւ ինչ ցաւալի
գուգադիպութիւն մարքից գալը և ազգի ներ-
քին յարաբերութիւնները այսչափ տնկ կերպա-
րանք ստանալը: Ատոմաւան իր դատաստանն ա-
նէ այդ ժողովի վրա, որից հանգստութիւն չէ
ունեցել ոչ մի պատրիարք, Խրիստեանից սկսած
մինչև Ներսէսը: Ամեն տեղից լսվում է այժմ,
որ Ներսէս պատրիարքը իր հրաժարականը ետ
առնելու պայմանը պիտի դնէ Կ. Պօլսի ազգային
ժողովի ժամանակաւոր փակումը մինչև հայոց
խնդրի վերջաւանը: Այս այն միակ միջոցն է, ո-
րով կարճակովին Ներսէսի կաշկանդված ձեռքերը
զանազան դիւաններին և ատեաններին պոռոտախո-
սութիւններից: Ներսէսի հրաժարականը շատ հե-
տաքերի երևոյթները դուրս հանեց այստեղի մա-
մուլի և ինտելլիգենցիայի կեղտոտութիւններից,
երեւակայեցէք ձեռք մինչև Ներսէսի հրաժարակա-
նի խօսքը երևան գալը բոլոր լրագրիւնները, մա-
նաւանդ երկուսը, էլ գովասանք չը կար որ չը
թափէին Ներսէսի վրա, բայց չէնց որ պատրիար-
քը զգուշելով ազգային ժողովից ներկայացրեց իր
ուշադրատուրը, իսկոյն այս ստոր արարածները
պողբեր հանեցին և զանազան կողմից սկսեցին
թափվել ազգային ժողով և Ներսէսի դէմ զանա-
զան հարցադրումներ անել: Ո՛րչափ ստոր և
գարշելի վարմունք, որ այստեղի ինտելլիգենցիա-
յի մէջ միայն կարելի է տեսնել... իսկ երբ այդ
նոյն ինտելլիգենցիան նշանակեց, որ ժողո-
վուրդը այնչափ կատաղած է իր ջերմ սիրած հո-
վիւրս չարչարելու համար, որ պատրաստ է մի-
շն անգամ հազարներով թափվել ազգային ժողո-
վի վրա բռնուցքով դուրս լուծելու համար նորա
մէջ նստածներին, այդ ժամանակ ստորեկ մրո-
տողները և պոռոտախօսները փոխեցին լեզունե-
րը, ասելով. «չատերը չանհիմն» լուր կը տարածեն
թէ պատրիարքի հրաժարականը յառաջ է եկած
ազգային ժողովի տուած պատճառներից, բայց
ազգային ժողովի և պատրիարքի մէջ ոչինչ ե-
ղած չէ: և այն: Սրա այնչափ ստոր են, որ
տեսնելով, թէ վեհանճն պատրիարքը ազգասիրու-
թիւնից ոչինչ չէ ասում իր հրաժարականի
պատճառը, ներքին անպիտանութիւնները օտար-
ներին չը յայտնելու համար, օգուտ են քաղում
այդ վեհանճնութիւնից և պատրիարքի սիրտը ա-
ւելի խոցոտում: Գոնէ ամաչելին օտար լրագրի-
ւորից, ինչպէս «Stamboul» և «Phare du Bos-
phore», որոնք տեսնելով պատրիարքի հրաժա-
րական ապաւ. անպատեհութիւնը և մնասը հայոց
խնդրին, ամբողջ առաջնորդող յօդուածներ են
նուիրում Ներսէսին, յանուն եղբայրսիրութեան

դէպի հայերը, աղաչելով և յորդորելով պատրիար-
քին արհամարել ստոր ինտրիգաններին և կուրա-
ցած շահախնդիրներին, իր տեղը մնալու և հայոց
բաղդը որոշելու համար: Շատ հետաքրքրական
են յիշելու և խորատական հայ մամուլի համար
այդ աղնիւ օտարների գրուածները. բայց միթէ
այստեղի ինտելլիգենցիան չափաւորութեան որ և է
չնչին չափ ունէ, որ հասկանայ ու գնահատէ
ազգային երևոյթները. ինչպէս ամբողջ տէրութիւնն
է փոսած, այնպէս էլ փոսած է մինչև ծուծը Կ.
Պօլսի հայ ինտելլիգենցիան, որը սակայն յան-
դգնում է մտածել Հայաստանի «բարոյական և
մտաւոր դարգացման զեկավարողը լինել»:
Հիմա, որ մեր աչքով ենք տեսնում այս ա-
մենը, միթէ կարող ենք որ և իցէ ժամանակ
հաւատալ սոցա ճառերին և հայրենասիրական
կեղծ խօսքերին, ամեն բան, ամեն խօսք, իւրա-
քանչիւր քայլ և շարժումը կեղծ է, խաբէրա-
յական և շահախնդրական այստեղի ինտելլիգեն-
ցիայի մէջ: Իսկ ինչ կը վերաբերվի միջին և սը-
տոր դասակարգին, ուրախութեամբ և պարծան-
քով պիտի ասած որ նա անմասն է իր ճշմար-
տութեան, անդաւաճման ազգասիրութեան և ան-
խոր զգացմունքի մէջ. նոյնը չէ միթէ և այդ-
տեղի հայերի մէջ. ով էր և որ դասակարգը ան-
ցեալ տարուայ սովի ժամանակ և միշտ եղբայ-
րական անկեղծ սէր և գուլթ ցոյց տուողը...
Հա, լաւ միտս եկաւ. այստեղի սովիւրդ յանձ-
նաժողովից եկաւ ինձ մօտ պաշտօնական յանձ-
նարարութեամբ յայտնելու յանձնաժողովի դար-
դը և «Մ շ ա կ ի» միջոցով իր անախի կորստեան
մի ելք գտնելու: Բանը նորանումն է, որ անցեալ
տարուայ սովի ժամանակ, յանձնաժողովից ուղղել
է էջմիածինը մօտ ութ հազար ոսկու ստացազիր,
որ իրր թէ կարելի լինի այդ գումարի ստա-
ցազրելով իրախուսել նուիրատուներին իրանց
տուած փողերի մասին չաշափելի ապահովու-
թիւն և անդորրազիր ներկայացնելով. սովիւրդ
անուշով ստացած փողերի փախարէն տուած թէ
ոչ էջմիածինը յանձնաժողովի ութ հազար ոս-
կու ստացազիրը. որչափ գումար կարողացաւ
հաւաքել էջմիածինը՝ մինչև հիմայ յանձնաժո-
ղովը չէ կարողանում ոչինչ իմանալ ամբողջ
տարի մի քանի տասնեակ համակներ գրելով
էջմիածին: Գնահատելովը ասում է. եթէ էջ-
միածինը չը կարողացաւ ոչինչ հաւաքել, թող
գոնէ մեր ուղարկած անդորրագրերը յետ ու-
ղարկէ. որ դորանով վստահանաք թէ յիշալի
սղող ոչինչ չէ տուել մեզ էջմիածինի ձեռքով:
ոչ անդորրագրի կայ, ոչ փող և ոչ պատասխան.
դեհ, այսուհետեւ թող զանազան լրագրիւնը մե-
ղադրեն «Մ շ ա կ ի»՝ «չափազանց անարգարու-
թեան համար էջմիածինի դէմ փառք Աստու-
ծու, որ անցեալ տարի իմ աչքին առաջ էին
կարծում Արաքսիայի կանաչ եկեղեցու մէջ ի-
րանց գլխի ոսկիւնը: Սաղիւնեան եպիսկոպոսի
տուփը լցնելու համար էջմիածին սովիւրդը: Այդ
սովիւրդները մինչև հիմայ դեռ սպասում են,
բայց Մանկունին այնպէս է լուում, որ կարծես
պատրաստվում է այն աշխարհը գնալու. Հայաս-
տանի սովիւրդ որբերին այնտեղ օգնելու համար...
Ուրեմն կրկնում եմ որ սովիւրդ յանձնաժողովը
յուսահատելով, իր դատը գցում է «Մ շ ա կ ի»
խմբագրատուն. ինչպէս ուղում էք, այնպէս ա-
րեցեք...
Նամակս վերջացած մի սրտայոյզ դէպք
տալիս ու վրա արեց մօտ նստած մի քանի բա-
րեկանների արամաղութիւնը. ներս մտան տուն
մի տաս հայաստանցի պանդուխտներ, որոնք մի
վայրկեան փետացած կանգնելուց յետ, յանկարծ
այնպիսի բուռն հնձեմանք բարձրացրին, որ
ամբողջ տունը թնդած կորովի տղամարդիկներ
ձայնից: Ամենքս մնացին շփոթված. «Ինչ կայ,
եղբարք, իսմ թշնամու տանը էքք, ամենքս էլ
եղբայր ենք, ասեցէք, ինչ ունէք» ամեն կող-
մից սկսեցին հարցնել: Էլ չը կարողանալով ոչ
մի բառ արտասանել, ամեն կողմից մեկնեցին
աղբարարներ, որոնցից մինի պատճէնը աւելորդ
չեմ համարում դնել այստեղ, ահա: «Մէկ տարի
մնէ այստեղ առանց գործի մնալով, Եր աւուր
պարտք ընելով ապրած եմք. հայրենեացս մէջ
մեր ընտանիք իւր թշնամու վիճակ կողբայ և
հոն գտնուող պարտքի տէրերին ամիս անգամ
մեզի նամակ կը խաւրին. ոչ կրնամք երթալ
և ոչ ալ այստեղ գործ մը կրնամք գտնալ. հի-
մայ վեր Աստուած, հոստեղ դու. մեզի կամ գործ
մը գտէք կամ ազատեցէք մեզ պարտքի գերու-
թենէ մեր զաւակաց և ընտանեաց երես տեսնե-
լու համար» Ահա ձեզ այս չորս տողերի մէջ

այստեղ քսան հազարներով մաշվող պանդուխտ-
ների վիճակը. ասեցէք խնդրեմ, ինչ է հարկա-
ւոր սոցա ազատելու համար, «Էջմ» թէ Հա-
յաստանի զանազան կենտրոններում փոքրիկ
բանկեր, երկրագործութեան և արուեստների
ատարձանաբար տեխնիկական կրթութիւն և այլն
այսպիսի գործնական միջոցներ չորս կողմը սրվու-
ված հարկը հազար հայ գերիներ ազատելու
համար, թէ վիկտոր Հիւգօի բօմանների թարգ-
մանութիւնը: Ինչպէս ասեցի անցեալ նամա-
կում, հայ պանդուխտներին պարտքի մէջ գե-
րի պահողները գլխաւորապէս Հայաստանի վաշ-
խառու հայերն են. ուրեմն հարկաւոր չէ սոցա
դէմ մի միջոց փնտրել: Բայց ինչ եմ ասում և
հում համար. Կ. Պօլսի գործիչներին շատ դարձ
է, որ թուրքաց Հայաստանում այսպիսի չարչա-
րանքներ կան. սոցա հարկաւոր է իրանց ա-
նունները հռչակել տալ և այդ էլ կարելի է
միայն ճառեր խօսելով և հրաւերներ գրելով ա-
նել, որ սոքա շատ բարեխղճաբար կատարում
են, էլ ինչ հարկաւոր է ընկերութիւններին շատ
զուրկ տրաքացնել Հայաստանին իրակաւ ա-
պէս օգնելու համար: Ահա որչափ կարողացաւ
աղղել «Մ շ ա կ ի» սոցա վրա, այսչափ տարի
ուղղելով սոցա իր դեմիւր իրական Հայաս-
տանը ճանաչելու համար: Ո՛ր է սոցա իրա-
կան Հայաստանը. չը լինի թէ 17 հազար (?)
չլոյսով կերակրվող երեխաները, որոնցով սո-
քա իւրաքանչիւրի առաջ պարծենալու պատրուակ
են գտել հիմայ: Աշխարհը կը փոխվի, Կ. Պօլսի
գործիչները սովորներին դարգալարեանութիւնը
չի փոխվի, վասն որոյ թող «Մ շ ա կ ի» հաս-
տատ մնայ իր մշտական համարումներ մէջ՝
Հայաստանի բարեբարուն երկրի Հայաս-
տանի մէջ միայն ցոյց տալով:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Լրագրիւններ Կ. Պօլսից հեռագրում են, թէ
հաստատ աղբիւրից լսվում է, որ սովիւրդը մահ-
վան պատժի տեղ նշանակեց ամբողջ կեանքի
աքսոր սուլթան Աբդուլ Ազիզին սպանողների
համար: Ներքին գործերի մինիստրը հրամայեց
Տրիպոլիսի նահանգապետին՝ արգելել եւրոպա-
ցիներին Տրիպոլիսում ճանապարհորդել առանց
սուլթանի առանձին ֆիրմանի: Հաւատացնում
են, որ Հօթաւ-փաշա Կ. Պօլսի է կանչված
Միջերկրական ծովում թուրքաց նաւատորմի
հրամանատարութիւնն ընդունելու համար:
—Լրագրիւններ գրում են հետեւեալը. իրան-
դական գործերի պետական քարտուղար Ֆօրս-
տերին իր անգաւ կանգ իւրաքանչիւր կող-
մից մի պատգամաւորութիւն ներկայացաւ հա-
մայրքների ժողովի անդամ Օսլիլիանի առաջ-
նորդութեամբ և անգլիական ու իրանդական
բաղդութիւն պատգամաւորների ուղեկցութեամբ:
Պատգամաւորութիւնը զանգատում էր բնակա-
րանների վատ դրութեան վրա, ամենաշնչին բը-
նակարանի համար պահանջվող չափից դուրս մեծ
գնելի վրա, և այն մեծ տարածութեան վրա, որ
ստիպված է լինում անցնել իւրաքանչիւր օր
գիւղական գործաւորը դէպի գործելու տեղը:
Պատգամաւորներից մէկը ցոյց տուեց վարձի
պայմանագրերը, որով արդելում է ֆերմերներին
գործաւորների համար խրճիթներ չլինել: Ֆօրս-
տեր ցոյց տուեց գործաւորներին այդպիսի խնդ-
րի վեճելու. դժուարութիւնը, բայց խոտացաւ
նրանց զանազանները ներկայացնել միջոցների
խորհրդի քննութեանը: Գիւղացիները խնդրում
էին նայեալ ընդարձակել իրանց ընտրողական
իրաւունքները, և Ֆօրստեր նրանց յայտ տուեց,
որ կառավարութիւնը կաշխատի բաւականու-
թիւն տալ նրանց պահանջներին. իսկ ինչ որ բնա-
կարանների լաւացնելուն է վերաբերում, այդ
բանի համար նա ոչ մի խոստումնք չը կարո-
ղացաւ անել:

—«Times» լրագիրը հաղորդում է, որ հասա-
րակութեան մէջ խնդրազդերներ են ստորագրվում
յօգուտ Բրէզիլի, որ թույլ արվի նրան մոտնել
համայնքների ժողովում: Պատգամաւորները այդ
խնդրագրիները կը ներկայացնեն հենց նոյն
օրը, երբ Բրէզիլ կը կրկնի իր փորձը վերա-
դառնալ պարլամենտ:
—«Neue Freie Presse» լրագիրը հաղորդում
էն հետեւեալ լուրը Կ. Պօլսից: Սուլթանը հարց-
րեց, այս օրերս, իր չրջապատողներին և սիրե-
լիւններին, չը մտցնել արդեաւ նորից Միջագիծի

սահմանադրութիւնը: Նրանք ի հարկէ,
պատասխանեցին, որ այդ գործը անժամանա-
կեայ կը լինէր: Այս լուրը տպաւորութիւն գոր-
ծեց:

—Բերլինից լրագրիւններ գրում են, որ հակա-
առաջդիմականները և հակասեմիտները Բերլին-
ում Բայնտապի յառաջիկայ ընտրութիւններին
ներկայացնում են իրանց սեփական կանդիդատ-
ներին, որոնց թուում և բարձր Մեյնիգհոլցին,
պրոֆէսոր Ադոլֆ Վադենշերն, Լրէմբերն և Շտե-
կերին: Լէյպցիգից պոլիցիան աքսորեց կրկին
22 սոցիալ-դեմոկրատներին:

—«Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ
հինգ բանւորներ վիէննայում, որոնք կազ-
մում էին գաղանի ընկերութեան կենտրոնական
մասնաժողովը, յանկարծ բռնկեցան և բանտարկ-
վեցան պոլիցիայի ձեռքով վիէննայի սրճարան-
ներից մէկի մէջ, ուր հաւաքվել էին նրանք խոր-
հրդակցելու համար:

—Ժընէվից «Wiener Allgemeine Zeitung»
լրագիրը հաղորդում են, որ այնտեղ նորերում
սոցիալիստների մի մեծ ժողով կայացաւ: Նախա-
գահում էին մի ուսու, մի ֆրանսիացի և մի տի-
կին, ինչպէս ասում են, ուսու ժողովը վճռեց որ
պրոկլամացիաներ, չրջաբերականներ և բրօշուր-
ներ այլ ևս փոստով չեն ուղարկվի, այլ առան-
ձին թղթատարների ձեռքով վեց թղթատարներ
արդէն նշանակված են: Այդ մարդիկը թղթերը ոչ
թէ արկղներով կը տեղափոխեն, այլ կապելով
իրանց սեփական մարմնի չուրջը: Քաղաքներում
առանձին վերատուգողներ կը լինեն, որոնց
մօտ թղթատարները պարտաւոր են ներկայանալ
և իրանց անձաւորութիւնը ծանօթացնել: Վե-
րատուգողները, որոնք խոշոր բաժիններ կը
կառավարեն, իրանց կողմից կենդանարկին կա-
տարող մասնաժողովին և պարտաւոր են հաշիւ
տալ նրանց իրանց գործողութիւնների համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԳ. 9 յուլիսի: Պաշտօնա-
կան հաղորդութիւն: Բանտարկված Գեղի-
ման կինը դիմեց յունիսի վերջերում Կայս-
րի ողորմածութեանը, խնդրելով մեղմանել
իր վրա կայացած դատավճիռը: Թաղաւոր
Կայսրը յուլիսի 2-ին հրամայեց բարեհա-
ճեց կեանք շնորհել Գեղիմանին փոխարի-
նելով մահվան պատիժը տաժանակիր աշ-
խատանքներով աքսորանք: մէջ, անորոշ
ժամանակով:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԳ, 9 յուլիսի: Պետական
բանկի 50% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 95 ռ. 78 Կ., երկրորդ 94 ռ. 37 Կ.,
երրորդ 94 ռ. 75 Կ., չորրորդ 94 ռ. 50 Կ.,
ներքին առաջին 50% փոխառութեան տոմ-
սակը արժէ 222 ռ., երկրորդ 221 ռ., արև-
ելեան առաջին փոխառութեան տոմսակը
արժէ 92 ռ. 25 Կ., երկրորդ 91 ռ., 87
Կ., երրորդ 91 ռ. 81 Կ., ոսկի 7 ռ. 81 Կ.:
Ռուսաց մի լուբը Լոնդօնի վրա արժէ 25,09
պէս, ուստաց 100 ռ. Բերլինի վրա արժէ
215 մարկ 12 պֆ., Փարիզի վրա արժէ 265
ֆրանկ 50 անտիմ: Բօրսայի տրամադրու-
թիւնը ամուր է:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

ՇԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐԻ և ՁԵՒԻ ԴԱՍԵՐ ամենանոր եղա-
նակով ԳԻՒԳՈՒԹԱՆ օգնութեամբ: Խեղճ
աղջկերանց համար առանձին պայմաններով:
Ընդունվում են կանանց և երեխաների հա-
մար ԿԱՐԻ: Մտնում են կարերի նոր ձե-
ւեր թղթից շինված, պատրաստվում են
մեքենայով ծախր: Կուկի, Նիկոլայիսկայա
փողոց, տուն № 87:

ՎԵՐԱԲԱՐՈՒՆԵՐ 4 ր., ծրծռներ 1 ր.,
ծաղիկ աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒՆ
4 ր., ԲԱՅԱՍԹՈՒՆ-ՄԱՀԱՅԱՆ 10 րուր և
աւելի, թէյի բաժաններ 25 և 30 կ., մի
աման քորոցներ 50 կ., պատակա ծխողների
համար 60 կ. Փունար, անգլիական ՎԱՆՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱՆ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

10,000 զոյգ գուլաններ 25 կ.—կոյ գոյզը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱՅԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բոմպէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-
րուսինա 40 կ.—1 ր., 300 հատ ըէֆոլիեր
4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍՏԱՆՈՎ, 10,000
ֆունտ թէյ, թէյ-ՍՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. եր
կաթէ գրիչներ խրաքանչիւր ձեռքի հա-
մար Ծախվում են ԱՆԳԼԻԱՆԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

19—100

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕНСКИХЪ АРМАНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԿԱՀԱՆՈՐՎԱԾ ՍԵՆՆԵԱԿՆԵՐ
10 ր. մինչև 30 ր. ամիսը ծառայով և
սամոլարով: Տրվում են նոյնպէս օրով Ար-
տիկրիկայա փողոցի վրա, զինուորական
գիմնազիայի հանդէպ Արուսեանի տանը,
№ 8:

1—4 (5)

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԳՐԻԳՈՐ ՎԱՐՁԵԼԵԱՆ
գինն է 70 կոպէկ
Ուսումնարանները և շատ օրինակ գնող-
ները 20% զիջում են ստանում:
Ցանկացողները կարող են գինը կամ
ուղղակի հեղինակին „Տիֆլիս, Դրիգորի
Սոլոմոնովիչ Վարձելան, Բր-
յանսկայա Սեմինարի, կամ կենտրոնական
գրադատանոց, ուր պահանջ է այդ զրքի:

144 Արժույթը գալերիա 144
ամենաէական պահեստ
մեքէի և հայկերների:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ
ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ
ВЪ НАЙМЫ
Въ галлерей имѣются: вода, газовое
освѣщеніе и телеграфная станція.
4—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՈՒՄ
ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ
Գալերիան կայ ջուր, գազի լուսավորու-
թիւն և հեռագրական կայարան:
4—10

Հրատարակութեամբ Ներսիս Սիմոնե-
անց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Նրէբերի
„Տնային բժշկական մարմնամարզութեան“
գրքովի հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է „Կենտրոնական և Կովկասեան գրա-
դատանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ.“ Тройцкій пер. типо-
графія Вартачанца, въ Тифлисъ.

ЧАИ
торгового дома
„ВАСИЛІЙ КЛИМУШИНЪ“
Оптовая торговля во время Нижегородской ярмарки—въ Маломъ Овощ-
номъ ряду за №№ 2 и 3-мъ и на
шоссе за №№ 49 и 50-мъ.
Чай торгового дома такъ же мож-
но получить на слѣд. ярмаркахъ:
Урюпинской, Симбирской, Ростов-
ской, Кіевской, Ярмолинской и во
всѣхъ украинскихъ; а такъ же и въ
постоянныхъ складахъ и магазинахъ:
С. Петербургъ, Варшавъ, Кіевъ,
Харьковъ, Орлъ и во всѣхъ главныхъ
городахъ южнаго и западнаго края.
Главная торговля въ Москвѣ, откуда
чай высылаются во всѣ города Рос-
сiи развѣшенными на фунты, полу-
фунты и четверти, за пломбою, съ
обозначеніемъ на каждомъ пакетѣ
чая вѣса, цѣны и фирмы,—этикетъ
фирмы утверждёнъ правительствомъ.
Желающіе имѣть непосредственныя
отношенія благоволятъ адресоваться:
Въ Главную Контору торгового дома,
въ Москвѣ.

10—10

ՎԱՍԻԼԻ ԿԼԻՄՈՒՇԻՆ ԱՌ-
ԵՏԻՐԱԿԱՆ ՏԱՆ ԹԵՅ
Ե քանակութեամբ Նրէբերի լոյս տեսաւ
գրքովի հայերէն թարգմանութիւնը 45
պատկերով, որոց միջոցաւ կարելի է
կատարել առողջապահական բազմաթիւ
մարմնամարզական կրթութիւններ ամեն
տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի:
Նա յարմարացած է ամեն հասակի արանց
և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախ-
վում է „Կենտրոնական և Կովկասեան գրա-
դատանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վար-
դանեանցի մօտ.“ Тройцкій пер. типо-
графія Вартачанца, въ Тифлисъ.

10—10

ԱՅՍ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ՍԿԶԻՑ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԸ
Որ առաջ գտնվում էր Արժույթը գալերիա, անցաւ Միլի մանեանի
խանութիւնը, Գործիչների Պատկերի վրա, Սուգերի Պալատի աակը № 3, 4
(երբեքն ջանջողագիտանների խանութը):—Այս 1881 թուականից գրախանութիւն կից
բացվում են:
Ա. Միլի առանձին բաժին ուսումնարանի, զինանարան, գրադարանի պիտոյքների,
ուր փաճառվում են թղթեր թանաքներ, մատիտներ, տետրակներ, քարտատախտիկներ,
գրատախտիկներ, փոստի ծրարներ, հայերէն և ֆրանսերէն մանրագրերով, կարկիններ,
նկարչութեան վերաբերեալ պիտոյքներ և այլն և այլն...
Բ. Թիֆլիսում արդէն յայտնի „Մանկական դաստիարակութիւն“
(Дѣтское Воспитаніе) անունով պ. Արիմեանի ֆիրման ևս անցաւ Կենտրոնական
Գրադատանոցի ձեռքը, ուր փաճառվում են ամենատեսակ մանկավարժական
խաղարկները ամենայն հասակի մանկանց համար:
Բարեկամներ են պատուէրներ նաեւ արտաքին քաղաքների ուսումնարանական
փառչութիւններից ու մանաւոր անձիքներից: Գները համեմատաբար չափաւոր են:
Դրամաւոր պատուէրները կատարվում են անյապազ:
Արտաքին քաղաքների օրիորդական ուսումնարանների փառչութիւնների գործը
թիւթեւացնելու համար Կենտրոնական Գրադատանոցը յանձնառու կը լինի կատարել
և այնպիսի պատուէրներ, որոնք իրան գործունէութեան շրջանից գուրս են, այն
Ձեռագործին վերաբերեալ ամենատեսակ պիտոյքներ գին և ուղարկել, բայց մի-
այն ուսումնարանների համար, որոնք իրանից են գրքեր և այլ ուսումնարանական իրեր
գնում: Անփող պատուէրներն անկատար են մնում:
Կենտրոնական Գրադատանոցում ի միջի այլոց փաճառվում են հետեւեալ նոր
հրատարակութիւնները:
Բաժնիր. խնթը 1 ր. 20 կ.
— Դաւիթ Բէկ 1 ր. 50 կ.
Յովհաննիսեան, Հայր և Հայաստանը օտարների աչքում 2 ր. 30 կ.
Շահազիզեան. Հրապարակախօս ձայն 2 ր. — կ.
— Նոյն փառակազմ 3 ր. — կ.
Այլազեան Գ. Արք. Պատմութիւն խալիպ. ուսումնարանի 2 ր. 40 կ.
Աթանասեան. Երեւանի նահանգի բուսականութիւնը 1 ր. 50 կ.
Բուսաբանութիւն համառօտ 1 ր. 30 կ.
Անփող պահանջներն անկատար են մնում:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարկից փողոցի անկիւնում Մի-
ԳՍԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:
Օտարաբաղաբայից կարող են գինը այս հասցէով. Թիֆլիս, Միխայլ
Н. Теръ-Никогосову.
35—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ԲԱՅՅԻԻ „ԽԵՆԹԸ“ անու-
նով փրկատախտիկներ: Նոր գինը ցանկացողներին խնդրում ենք գինը ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաբե-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ
պ. Արքեանից Թարթառեանցին, ԹԱՐՎԷՂ պ. Գրիգոր Բէշանեանցին:
Հրատարակչի հասցէն. Միւսա, Վէ կոնորթ Բրայանց ԲԵԼՄ ԱՍ-
ԲԵՏԻՆՍՍ.

ԹԵՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱԶՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ
լու տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր.
և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ
այն անձանց, որոնք ցանկանում են ծառա-
ւել իրերովը 3 ր. հետ ամեն տեղ ԹԵՅ-
ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆ-
ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կշռում է ՄԱԳՈՒՐ Թէյ
առանց թղթի և ԱՐՃՃԻ:
10—100

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՅԻ ԵՒ ԸՆԿ.
ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ
Տեղափոխվեցաւ Գանօփակայա փո-
ղոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՈՅԻՑ փողոցը № 11. փօստատան
հետի քուշան: Ընդունվում են ամեն լի-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամաշելի գներով:
Նոյն տպարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
տպագրութեան համար փայտի և պղնձի
փրա:

Խնդրում եմ վրաստանի և խմբէթի թէ
մի ազգային հոգեւոր ուսումնարանների փա-
ռչութիւններին մինչև առաջիկայ օգոստոսի
1-ը հաղորդել ինձ, իմէ ունեն որ և իցէ
իսկ և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ
այն անձանց, որոնք ցանկանում են ծառա-
ւել իրերովը 3 ր. հետ ամեն տեղ ԹԵՅ-
ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆ-
ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կշռում է ՄԱԳՈՒՐ Թէյ
առանց թղթի և ԱՐՃՃԻ:
10—100

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անունով ԵՐՐՈՐԴ և ՉՈՐՈՐԴ տարուայ
մեր դասագրքերը յանձնուեցան մամուլին և
լոյս կը տեսնեն օգոստոսին Այդ դասագր-
քերը կրում են բոլորովին նոր հոգի և ու
նոր ուղղութիւն:
Յ. Նազարեանց
5—5

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՐՈՅԵՐՆԵՐ
Թուսերէն, հայերէն և վրացերէն
Թուսերէն 30 տեսակից 30 հատը 1 ա.
հայերէն 3 տեսակից 50 հատը 1 ա. փա-
ղերէն 7 տեսակից 50 հատը 1 ա. մեր
հասցէն. Թիֆլիս, Էլիզաւետինսկայա լւ.
№ 71, Աբրաամ Ամիրխանյան.
16—20 (2)